2/26.5/53

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«15» 01 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ0008-21

Ձեռնարկողը՝ *«ՄԵՐ ՔԱՐԵՐ» ՍՊԸ*
գ. Գեղհովիտ, 5-րդ փողոց,10 նրբ. 5/10

Գործունեությունը՝ Մարտունու բազալտների հանքավայրի /1-Ա բլոկ/ օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Գ. Գևորգյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0008-21

<15> 01 2021թ.

Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրի /1-Ա բլոկ/ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Մեր քարեր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտ համայնք

Ներածական մաս. «Մեր քարեր» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Մարտունու բազալտների հանքավայրի /1-Ա բլոկ/ արդյունահանման աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Մարտունու բազալտների հանքավայրի /1-Ա բլոկ/ արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Մարտունու բազալտների հանքավայրը գտնվում է Գեղամա և Վարդենիսի հրաբխային լեռնաշղթաների միացման մասում, մեղմ թեքություններով սարահարթի վրա, Արգիճի և Մարտունի գետերի միջագետքում / համապատասխանաբար՝ Արգիճի գետից 0.47կմ իսկ Մարտունի գետից 1,5կմ հեռավորությունների վրա/: Հանքավայրի բացարձակ նիշերը տատանվում են 2140մ-ից մինչև 2190մ-ի սահմաններում: Ընկերության կողմից նախագծված բացահանքը գտնվում է հանքավայրի հարավային մասում, Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ համայնքի վարչական սահմաններում, համայնքից 0.96կմ հարավ-արևմուտք ուղղությամբ: Արդյունահանման աշխատանքները կազմակերպելու համար օգտագործվելու է գոյություն ունեցող ճանապարհները, որոնք բարվոք վիճակում են:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրի պաշարները՝ A, B և C_1 կարգերով, համապատասխանաբար՝ 845.0հազ.մ^3, 2687.0հազ.մ^3 և 3005.0հազ.մ^3 քանակներով, 1967 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 1967թվականի ապրիլի 29-ի N 162 արձանագրությամբ: Բլոկի ելքը

լեռնային ապարներից կազմում է 34%: Օգտակար հանածոն պիտանի է օգտագործելու որպես հումք՝ երեսապատման քարերի, շինարարական քարի արտադրության և այլ արտադրանքի ստացման համար: Ընկերության կողմից նախատեսում է հաստատված պաշարների եզրագծի հարավային հատվածում, Մարտունու բազալտների հանքավայրի 1-Ա բլոկից արդյունահանել օգտակար հանածո: Նախագծված բացահանքի դաշտի օտարման տարածքը կազմում է 4.14 հա, որում ընդգրկված մարվող պաշարների քանակը Ա կարգով կազմում է 623.6հազ.մ^3, իսկ կորզվող պաշարների քանակը՝ 552.4 հազ.մ^3: Բացահանքի տարեկան արտադրողականությունը հաշվարկված է ըստ մարվող պաշարի՝ 12472մ^3, ըստ կորզվող պաշարի՝ 11048մ^3: Բացահանքի ծառայման ժամկետն ընդունված է 50 տարի: Նախագծված բացահանքի ծայրակետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են.

1. y =8523035, x =4438778
2. y = 8522934, x =4438918
3. y = 8523186 , x = 4438921
4. y = 8523360, x = 4438773

Հանքավայրը ծածկող երեսաշերտը ներկայացված են հողաբուսական շերտով (0.31մ հզորությամբ) և ալյուվիալ-դելյուվիալ բերվածքներով (մոտ 1.3մ հզորությամբ գլաքարավազային, գլաքարային, ավազակավային և ջարդոտված հողմնահարված բազալտների կտորներով): Պայմանավորված ապարների բարձր ջրաթափանցելիությամբ բացահանք ներթափանցող մթնոլորտային տեղումները հեշտությամբ կարող են ենթարկվել բնական դրենաժի: Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից, մակաբացման ապարների ոչ մեծ հզորություններից և հիդրոերկրաբանական պայմաններից, հանքավայրի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով՝ կիրառելով հորատասեպային եղանակ: Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ՝ մակաբացման ապարներն արտաքին լցակույտ տեղափոխելով:

Մինչև օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների սկսելը, ծածկող մակաբացման ապարների շերտը բուլդոզերով հավաքվում և ավտոինքնաթափով տեղափոխվում է բացահանքի հյուսիս արևելյան մասում ձևավորվող ժամանակավոր լցակույտեր և առանձին-առանձին պահեստավորվում են N1 և N2 լցակույտերում: N1 լցակույտը հողաբուսական շերտի լցակույտն է, իսկ N2-ը՝ ալյուվիալ-դելյուվիալ առաջացումների լցակույտն է (գլաքարավազային, գլաքարային, ավազակավային նյութերով և ջարդոտված հողմնահարված բազալտների կտորներով): Ընկերության կողմից շահագործվող բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- Ամենամեծ երկարություն – 332մ,
- Ամենամեծ լայնություն – 218մ,
- Մակաբացման ապարների միջին հզորություն – 1.61մ,
- Օգտակար հանածոյի ամենամեծ հզորություն – 34.5մ,
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակ՝ - 623.6հազ.մ^3,
- Արդյունահանվող պաշարների քանակ՝– 552.4հազ.մ^3,
- Մակաբացման ապարների քանակ – 66.9հազ.մ^3:

02543163
ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հանքավայրի բացումն իրականացվելու է հարավ-արևելյան մասի 2186.5մ բարձրության նիշից, կառուցելով 50մ երկարություն, 8մ լայնությամբ ավտոճանապարհ, որն աստիճանաբար երկարելով կսպասարկի հաջորդ հորիզոնները:

Համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, միաքարի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել հորատասեպային եղանակով: Հանքաստիճանները մշակվելու են 2.5մ բարձրությամբ հանքաստիճաններով՝ հաջորդաբար վերևից-ներքև: Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

- Հանքաստիճանի բարձրություն – 2.5 մ;
- Անվտանգության բերմայի լայնություն – 1.0 մ;
- Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյուն – 90^0;
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնություն 18-20 մ:

Բլոկների (մեծ աղյուսների) արդյունահանումը և միաքարի անջատումը զանգվածից նախատեսված է կատարել հորատասեպային աշխատանքներով (ուղղաձիգ ուղղությամբ անջատելով միաքարը) սեպանցքերի մեջ տեղադրելով սեպ և հիդրավլիկ ճնշմամբ առաջացնելով զանգվածի ճեղքում: Սեպանցքերը հորատումն իրականացվելու է հորատման մուրճերով, իսկ որպես միաքար առանձնացնող մեխանիզմ օգտագործվելու է "Кварц" մակնիշի հիդրոսեպային կայանքը: Հանույթից առաջացած արտադրական թափոնները /364585մ^3 ծավալով, որոնք իրենցից ներկայացնում են բազալտի կտորներ/ և բլոկները բացահանքի շահագործման տարիներին կիրացվեն տեղում՝ սպառողի կողմից:

Մակաբացման ապարները /որոնց ծավալը բացահանքում կազմում է 66900մ^3/ որոնք ներկայացված են փխրուն-բեկորային դելյուվիալ առաջացումներով և հողմնահարված բազալտներով, առանց նախնական փխրեցման հեռացվելու են բուլդոզերի օգնությամբ: Ավտոինքնաթափով տեղափոխվելով 0.5կմ հետավորության վրա, մակաբացման ապարները տեղադրվում են բացահանքի հյուսիս-արևելյան մասում ձևավորվող ժամանակավոր լցակույտերում: Լցակույտի միջին բարձրությունը կկազմի 7.5մ, թեքության՝ a=35^0-ի դեպքում լցակույտերի զբաղեցրած մակերեսները համապատասխանաբար կկազմեն՝ 6930մ^2 և 14300մ^2: Հնարավորություն ստեղծվելուց հետո մակաբացման ապարները կտեղափոխվեն բացահանքի հատակին՝ ստեղծելով ներքին լցակույտեր:

Շահագործման 20-րդ տարվանից սկսած, շահագործմանը զուգընթաց N1 և N2 ժամանակավոր լցակույտերի մակաբացման ապարներն /ընդհանուր 63700մ^3 ծավալով/ տվյալ տարածքին անհրաժեշտ քանակությամբ աստիճանաբար կտեղափոխվեն բացված հատակ՝ ստեղծելով ներքին ցակույտաառաջացում: 1.9մ հզորությամբ լցվելով արդեն իսկ արդյունահանված՝ 2186.5մ 2184.0մ, 2181.5 բարձրության հորիզոնների վրա, կհարթեցվեն՝ ձևավորելով ներքին լցակույտեր: Ապարների մնացած՝ 3200մ^3 ծավալն օգտագործվելու է բացահանքի շահագործման ավարտին՝ խախտված հողերի վերականգնման ժամանակ: Նախագծով ընդունված բուլդոզերը և էքսկավատորն օգտագործվելու են լցակույտառաջացման ժամանակ:

ՀՀ ԲՆՕՍՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
РА ЕРЕВАН
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բացահանքի ջրամատակարարումը նախատեսված է աշխատողներին խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Բացահանքում տեխնիկական և խմելու նպատակներով ջուրը կբերվի ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը կհեռացվեն անջրթափանց հոր, որը սահմանված կարգով կդատարկվի:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար գազերի և փոշու աղբյուր են հանդիսանում բացահանքը, տեխնիկական և տրանսպորտային միջոցները, լցակույտերը: Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերն են՝ անօրգանական փոշին, ազոտի և ածխածնի օքսիդները, ածխաջրածինները, պինդ մասնիկները (մուր): ՇՄԱԳ հաշվետվությունում հաշվարկվել են արտանետումների քանակները: Արտանետումների ազդեցությունը գնահատելու համար կատարվել է դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ /"Էռա"("Эра") համակարգչային ծրագրով/: Համաձայն հաշվարկների արդյունքների արտանետվող նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների առավելագույն արժեքները /հաշվի առնելով նաև ֆոնային ցուցանիշները/, չեն գերազանցում սահմանված ՍԹԿ-ները:

Բացահանքի լեռնակապիտալ աշխատանքների և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են բնապահպանական միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը, այդ թվում՝

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակներ, հանքախորշեր, լցակույտեր, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհ) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,
- տեխնիկատրանսպորտային միջոցների աշխատանքի ապահովում ձայնախլացուցիչ սարքավորումներով՝ աղմուկի մակադակի նվազեցման նպատակով,
- տեխնիկա-տրանսորտային միջոցների երթևեկության բացառում ճանապարհներից ու արտադրական հրապարակներից դուրս,
- դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա զտիչների տեղադրում՝ արտանետումների նվազեցման նպատակով,
- արտադրական հրապարակում նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված տեղում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում և հանձնում որպես մետաղական թափոն,
- կենցաղային կեղտաջրերի հեռացում բիոզուգարանի միջոցով, որը կտեղադրվի արտադրական հրապարակում,
- խախտված տարածքների վերականգնում/ռեկուլտիվացիա:

Մարտունու բազալտների հանքավայրում /1-Ա բլոկ/ խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնումներն իրականացվելու են շահագործական աշխատանքների ավարտից և պաշարները սպառելուց հետո: Լեռնատեխնիկական վերականգնման նպատակով օգտագործվելու է լցակույտում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

մնացած՝ 3200մ³ մակաբացման ապարների ծավալը: Նշված ծավալը կտեղափոխվի 2151.5 և 2149.0մ, բարձրության հանքաստիճանների վրա, կփռվի 1.9մ միջին բարձրությամբ և կհարթեցվի: Լեռնային աշխատանքների ավարտից հետո կհարթեցվեն՝ բացահանքի հատակի՝ 31350մ², արտադրական հրապարակի և ավտոճանապարհների մակերեսները, կվերականգնվի և կհարթեցվի նաև նախկինում ձևավորված արտաքին լցակույտի մակերեսը: Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը ընդհանուր կկազմի 49000 մ², իսկ լեռնատեխնիկական վերականգնման իրականացման ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 1093.2 հազ. դրամ: Լեռնատեխնիկական վերականգնումից հետո նախատեսված է կենսաբանական վերականգնում, որի համար կօգտագործի N1 հողաբուսական շերտի լցակույտում պահեստավորված հողախառն ապարները: Ապարները փռելուց հետո կիրականացվի հիդրոցանք: Ընդհանուր՝ 4.9 հա մակերեսում կենսաբանական վերականգնման իրականացման ծախսերը գնահատվել են 980 000 դրամ, իսկ ռեկուլտիվացիոն ծախսերը ընդհանուր կկազմեն՝ 1093.2+980.0= 2073.2հազ.դրամ:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսերը կկազմեն 150.0 հազ ՀՀ դրամ:

ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հրդեհային անվտանգությանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության՝ կարևորվելով լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանը, տեղական ինքնակառավարման մարմինները, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ և «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018թվականի N 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

2. Հանքավայրի շահագործման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:

3. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մեր քարեր» ՍՊԸ ՍՊԸ ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Մարտունու բազալտների հանքավայրի /1-Ա բլոկ/ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան